



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-28-77

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2017թ.

«Էտաքննող լրագրողներ» հ/կ-ի նախագահ,  
«Էտաք» թերթի խմբագիր Էդիկ Բաղդասարյանին

Ձեր 16.05.2017թ. գրությանը

Հարգելի պարոն Բաղդասարյան

Ներկայացնում եմ Ձեր կողմից տրված հարցերի պատասխանները.

1. Ազնվաձոր, Արջուտ, Մղարթ, Մարց, Լեջան, Քարաբերդ, Սարչապետ, Հովնանաձոր, Գեղասար եւ Բլագոդարնոյե համայնքները չունեն խմելու ջրամատակարարման համակարգ եւ հիմնականում օգտվում են գյուղամիջյան աղբյուրներից, սեփական բակերում ունեցած ջրհորներից եւ գետերի ջրերից, հետեւաբար որակական առումով խմելու ջրի պահանջները երբեմն (հատկապես գարնան վարարումների ժամանակ) չեն համապատասխանում պահանջվող նորմերին: Բազում համայնքը նույնպես կիսով չափ օգտվում է գետի ջրից, միայն մի թաղամաս օգտվում է Ազնվաձոր համայնքի մոտ բխող աղբյուրի ջրից, որը համայնքի ջրատարով հասցվել է այդ թաղամաս: Մեծ Այրում համայնքում ՀՀ ԿԱ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ՊՀ ԾԻԳ-ի կողմից ավարտվել են խմելու ջրագծի արտաքին ցանցի կառուցման աշխատանքները, սակայն բաշխիչ ցանցի բացակայության պատճառով հնարավոր չէ իրականացնել ջրամատակարարումը:
2. Չեն ոռոգվում Ամրակից, Գյուլագարակ, Վարդաբլուր, Հոբարձի, Կուրթան, Լոռի Բերդ, Բովաձոր, Ծաղկաբեր, Ստեփանավան, Սպիտակ, Դսեղ, Հաղպատ, Արջուտ, Ղուրսալի, Նոր Խաչակապ, Քարաձոր, Քարաբերդ, Լեռնանցք, Շենավան համայնքները:

3. ա/ Խմելու ջուրը բնակչության համար ունի կենսական նշանակություն եւ մշտապես գտնվում է մարզպետարանի ուսումնասիրությունների շրջանակներում: Յուրաքանչյուր հնարավորություն օգտագործվում է համայնքներում խմելու ջրի խնդիրները կարգավորելու համար: Նշված համայնքները հիմնականում խմելու ջրի պաշարները ստանում են սարերի բնական աղբյուրներից, ինչը վերանորոգված ջրագծերի դեպքում կբավարարեր բնակչության խմելու ջրի ողջ պաշարը: Սակայն 60-70-ական թվականների ջրագծերն արդեն քայքայված են, գտնվում են անմխիթար վիճակում եւ ջրի կորուստները դառնում են անխուսափելի: Նույն վիճակում են նաեւ ջրամատակարարման ներքին ցանցերը: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնախնդիր ունեցող համայնքները ներկայացվել են տարբեր ծրագրերի եւ կազմակերպությունների: 2015թվականին «ՎԻՎԱ»-սել Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի, պետ. բյուջեի եւ «Նոյարք» հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվել է Չկալով համայնքի ջրագծի կառուցումը: ՀՀ ԿԱ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ՊՀ ԾԻԳ-ի ֆինանսավորմամբ իրականացվել են Կաթնաջուր, Դսեղ, Մեծ Այրում, Ճոճկան համայնքների ջրամատակարարման համակարգերի վերակառուցման աշխատանքները, իսկ 2016թվականին վերակառուցվել է նաեւ Սվերդլով համայնքի ջրամատակարարման համակարգը: Ներկայացվել են նաեւ այլ համայնքներ, սակայն ֆինանսական միջոցների բացակայության պատճառով հայտերը չեն ընդունվել: Ֆինանսական միջոցների առկայության դեպքում առաջնահերթության սկզբունքով կիրականացվեն Մեծ Այրում համայնքի բաշխիչ ցանցի կառուցման աշխատանքները:

բ/ Լոռու մարզում գործող «Լոռի» ԶՕԸ-ի կազմի մեջ ընգրկված 35 համայնքներից՝ Ամրակից, Գյուլագարակ, Վարդաբլուր, Հոբարձի, Կուրթան համայնքները գտնվում են «Կիրովի» ջրհան կայանի սպասարկման տարածքում և պոմպակայանի ու ջրանցքի անմխիթար վիճակի պատճառով ոռոգում չի իրականացվում:

Լոռի Բերդ, Բովաձոր, Ծաղկաբեր համայնքները և Ստեփանավան քաղաքը չի ոռոգվում ներքին ցանց չունենալու պատճառով, իսկ Սպիտակ քաղաքը չի ոռոգվում թիվ 1 պոմպակայանի անսարքության պատճառով:

Լոռու մարզպետարանի և ջրօգտագործող ընկերության հետ համատեղ կատարվել են ուսումնասիրություններ, համաձայն որի անհրաժեշտ է իրականացնել հետեւյալ աշխատանքները

**Ամրակից**– ոռոգման ներքին ցանցի կառուցում 4 կմ երկարությամբ

**Գյուլագարակ** – ոռոգման ներքին ցանցի կառուցում 7 կմ երկարությամբ

**Վարդաբլուր** – ոռոգման ներքին ցանցի կառուցում 14 կմ երկարությամբ

**Կուրթան** – ոռոգման ներքին ցանցի կառուցում 15 կմ երկարությամբ

**Հոբարձի** – ոռոգման ներքին ցանցի կառուցում 9 կմ երկարությամբ

**Ծաղկաբեր** – փոքր ջրամբարի կառուցում 400 հազ. խմ ծավալով, ոռոգման ներքին ցանցի կառուցում 6 կմ երկարությամբ

**Սպիտակ** – N 1պ/կ ճնշումային խողովակաշարի կառուցում՝ մետաղական խողովակից 1 կմ երկարությամբ

**Լոռի Բերդ և Բովաձոր** – ոռոգման ներքին ցանցի բացակայություն, ներտնտեսային ջրանցքի և ցանցի կառուցում

Նշված խնդիրների մասին տեղյակ է պահվել ջրային տնտեսության պետական կոմիտեին, դիմել ենք Համաշխարհային բանկի «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման» (ՏՏԵՁ) և «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ՊՀ ԾԻԳ-ին, սակայն ֆինանսական միջոցների սղության պատճառով մերժել են:

4. ա/ Խմելու ջրի խնդիր ունեցող համայնքները սեփական ջրամատակարարման համակարգ ունեցող համայնքներ են:

բ/ Մարզում գործող «Լոռի» ԶՕԸ-ի (ջրօգտագործող ընկերություն) կազմի մեջ ընգրկված են 35 համայնք (Ամրակից, Գյուլագարակ, Վարդաբլուր, Հոբարձի, Կուրթան, Ստեփանավան, Բովաձոր, Լոռի Բերդ, Լեջան, Ագարակ, Յաղդան, Կողես, Կարմիր Աղեկ, Մղարթ, Արևածագ, Արդվի, Այգեհատ, Ծաթեր, Օձուն, Շնող, Մեծ Այրում, Ճոճկան, Սարալանջ, Լուսաղբյուր, Հարթագյուղ, Սարահարթ, Ծաղկաբեր, Իսնկոյան, Լեռնավան, Զրաշեն, Գեղասար, Կաթնաջուր, Մեծ Պարնի, Շիրակամուտ, Սպիտակ):

Նշված համայնքներից Ամրակից, Գյուլագարակ, Վարդաբլուր, Հոբարձի, Կուրթան համայնքները գտնվում են «Կիրովի» ջրհան կայանի սպասարկման տարածքում: Մարզի մնացած համայնքներում ոռոգման ջրի մատակարարումն իրականացվում է համայնքային սեփականության միջոցով:

Մ Ա Ր Զ Պ Ե Տ



Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ